տայայտութիւն՝ ուրուագծել էր արդէն Ռուսաստանի ապագայ պետական կազմը իբրեւ ռամկավար դաշնակցային հանրապետութիւն, օժտուած այն բոլոր սահմանադրական երաշխիքներով, որոնք անհրաժեշտ էին թւում, որպէսզի այդ հանրապետութիւնը, երկրի տնտեսական եւ քաղաքակրթական զարգացմանը համընթաց, առանց որեւէ կաշկանդումի եւ արհեստական յապաղումի, դիմէ դէպի հանրային կեանքի այն ձեւերը, որոնց մէջ մարդու աշխատանքը պիտի դադարի շահագործման առարկայ լինելուց, որոնց մէջ մարդը այլեւս միջոց չպէտք է լինի մարդու համար, այլ միայն նպատակ:

Մինչդեռ յեղափոխական Ռուսաստանը այս ծրագիրներն էր որոճում եւ նրանց դէմ ծառացած արգելքների դէմ մաքառում՝ անդին ռուսական բոլշեւիզմը իր ժանիքներն էր սրում Վիլհելմից եւ Լուդենդորֆից ստացած խարտոցով եւ իր դարանները լարում միջազգային արկածախնդիրների ձեռնտուութեամբ: Ու մի օր էլ, երբ նրան յաջողուեց երկարատեւ պատերազմից ջղայնացած զօրքը վերածել շըղթայազերծ ստրուկների մի բազմութեան, որին կարելի էր ամբոխավարական ճառերով գործիք դարձնել ամէն կարգի մութ գործերի համար՝ բոլշեւիզմը դուրս թռաւ իր դարանից, անցաւ այդ զինուած ամբոխի գլուխը եւ... մնացածը յայտնի է: Փետրուարեան Յեղափոխութիւնը անկենդան դեռին էր փռուած եւ Ռուսաստանը՝ մատնուած ամբոխի ստորին, գաղանային բնազդներին՝ արեան ճապաղիքների, հրդեհի, աւերածութիւնների, սովի եւ համաճարակի մի դժոխք դարձած...

Յանուն ինչի՞:

Յանուն սոցիալիզմի: Յանուն այն սոցիալիզմի, որ նշանակում է մարդկայնութիւն եւ չէնութիւն: Յանուն այն սոցիալիզմի, որ դըրախտի պիտի փոխէր երկիրը, բոլոր երկիրները...

Տասը տարի է անցել այդ մղձաւանջային օրերից, եւ մենք այսօր ի վիճակի ենք բոլշեւիզմի տարած ահռելի զոհերի եւ բերած արդիւնքի հաշուեկշիռը կազմելու: Հարկաւոր է միայն հոկտեմբերեան յեղաշրջման քաղաքական, ընկերային եւ տնտեսական առաջադրութիւնները զուգադրել այն իրականութեանը, որի մէջ գտնուում են այսօր Խորհրդային իշխանութիւնը եւ նրա լծի տակ ընկած երկիրները:

Այս հաշուեկշիռը անհրաժեշտ է մանաւանդ այն պատճառով, որ բոլշեւիկները հոկտեմբերեան յեղաշրջման տասնամեակի առթիւ անդադրմամբ ապլոմբով վեր են հանում իրենց կատարած գործերը եւ ձեռք բերած արդիւնքները:

Անշուշտ որեւէ յեղափոխութեան դրական կամ բացասական արժէքը չէ կարելի որոշել՝ միմիայն նրա առաջնորդների կողմից հրապարակ դրուած նպատակների իրագործումը չափանիշ դարձնելով: Յեղափոխութիւնը արժէքներ է ստեղծում եւ անկախ իր առաջնորդների կամքից, իրերի բնական ընթացքով: Այս տեսակէտից բացառութիւն չէ կազմում եւ հոկտեմբերեան յեղաշրջումը, որի խոշոր դերը ոչ մի ընկերարան կամ պատմարան անտես առնել չի կարող: Եւ եթէ մենք առաջին հերթին խօսում ենք ոչ թէ հոկտեմբերեան յեղաշրջման առարկայական դերի, այլ նրա առաջնորդների գործերի մասին՝ սրա պատճառները երկուս են. նախ՝ որ այդ առաջնորդները — բոլշեւիկները — իրենց «ձեռք բերած արդիւնքները» տօնական զարդարանք դարձնելով՝ մի անգամ եւս փորձում են մոլորեցնել միջազգային աշխատաւորութեան կարծիքը իրենց կատարած եւ չկատարած գործերի չինծու պատմութիւններով, եւ ապա՝ որ նրանց առաջադրութիւնների եւ ձեռք բերած իրական արդիւնքների համեմատութիւնը խիստ հրահանգիչ է այն բոլոր անհատների եւ հաւաքականութիւնների համար, որոնք հանրային կեանքը համաձայն իրենց ցանկութեան, եւ առանց առարկայական պայմանների նկատառութեան, կերտելու ցնորքներ են սնուցանում:

Պարզից բարդին անցնելու մեթոդով՝ քննենք հոկտեմբերեան յեղաշրջման ղեկավար կոմունիստական կուսակցութեան գործերը՝ արտաքին կամ միջազգային քաղաքական խնդիրներից սկսելով, մանաւանդ որ իրենք բոլշեւիկներն էլ վաստօրէն այստեղից սկսեցին իրենց գործունէութիւնը:

Այս մարդի մէջ բոլշեւիկեան կուսակցու-